Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի №240Ա
որոշմամբ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիայի

Պայմանները

(Լիցենզիա N0319, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 27-ի N241Ա որոշմամբ)

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

1. Սույն լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացություններն են.

Արտադրող՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Արտահանող՝ Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր կամ Համակարգի օպերատոր՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ որի գործառույթները սահմանված են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

Էլեկտրաէներգետիկական շուկայի կանոններ կամ Շուկայի կանոններ՝ այնպես, ինչպես ձևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը սույն լիցենզիայով սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիա (հզորություն) արտահանելու իրավունք.

Լիցենզավորված անձ՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

Լիցենզավորված անձին վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն՝ այնպես, ինչպես ձևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ,
ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2009 թվականի մայիսի 27-ից:

3. Լիցենզիայի գործողության ժամկետն է՝ մինչև 2010 թվականի մայիսի 27-ը:

3. Լիցենզավորված գործունեության բովանդակությունը

4. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին տրվում է իր կողմից արտադրված էլեկտրաէներգիան (հզորությունը) Շուկայի կանոններին և Լիցենզիայի պայմաններին համապատասխան Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանելու իրավունք:
5. Արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) ծավալները սահմանվում են Լիցենզիայի անբաժանելի մասը կազմող՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Իրանական գազ արտահանող Ազգային ընկերության 2004 թվականին կնքված էլեկտրական էներգիայի (հզորության) առաքման պայմանագրի համապատասխան (Հավելված)՝ հետևյալ չափաքանակով.

Առաքման տարեթվերը	Պայմանագրով նախատեսված տարեկան քանակը, մլրդ կՎտժ	Առաքման ծավալները, ՄՎտ
2009-2010	3,3	500

6. Արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) գները չեն կարգավորվում:

4. Լիցենզավորված գործունեության պայմանները

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերի պահանջներին:
8. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման լիցենզիա տրվում է միայն ներքին շուկայի հագեցվածության դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին շուկայի Սպառողների շահերին:
9. Լիցենզավորված անձը չի կարող Լիցենզիան օգտագործման տալ, օտարել կամ գրավադրել այլ անձանց՝ առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու և Լիցենզիայում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու: Սույն Լիցենզայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
10. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:
11. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերն առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:
12. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով:
13. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների էներգակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:
14. Լիցենզավորված անձը Լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի տնտեսական արդյունավետության սկզբունքներին, ստանդարտներին, անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան:
15. Լիցենզավարված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին:
16. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:
17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով իրականացնել իր ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ՝ այդ թվում Հանձնաժողովի կողմից առաջադրված առանձին խնդիրների վերաբերյալ:

18. Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին ու ձևերին համապատասխան, Հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն և հաշվետվություններ՝
    ա) բանկերում ունեցած հաշիվների մասին,
    բ) անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
    գ) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
    դ) երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով:
19. Լիցենզավորված անձի և լիցենզիա ունեցող այլ անձանց հետ կնքվող էներգամատակարարման (առուվաճառքի) և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:
20. Լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանգրերը ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելուց հետո:
21. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ համաձայն կնքված պայմանագրի:
22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով և Համակարգի օպերատորի անհապաղ հայտնել էլեկտրական էներգիայի (հզորության) ծավալների նախատեսված փոփոխությունների մասին:
23. Լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:
24. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես Հանձնաժողովին հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:
25. Եթե Հայաստանի Հանրապետությունից դուրս էլեկտրական էներգիա (հզորություն) արտահանման Լիցենզիա ստացել են մեկից ավելի անձինք, ապա յուրաքանչյուրի փաստացի մասնաբաժինը Հայաստանի Հանրապետության սահմանում որոշվում է դրանց միջև կնքված հատուկ պայմանագրով ամրագրված սկզբունքով: Արտահանողների միջև էլեկտրական էներգիա (հզորության) մասնաբաժինների որոշման վերաբերյալ տարաձայնությունները սահմանված կարգով քննարկվում են Հանձնաժողովում:

5. Լիցենզավորված գործունեության վերահսկում

26. Սույն Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը իրականացնում է Հանձնաժողովը:
27. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչները ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:
28. Լիցենզավորված անձը պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:
29. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև այաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

6. Տույժեր

30. Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հանձնաժողովը, իր կողմից սահմանած կարգով իրավասու է կիրառել հետևյալ տույժերը.
    ա) նախազգուշացում,
    բ) Լիցենզիայի կասեցում,
    գ) Լիցենզիայից զրկում:
31. Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
32. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և համաձայն Լիցենզիայի պայմանների:
33. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ սույն Լիցենզիայի 6.1 կետով սահմանված տույժերի, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

7. Լիցենզիայի պայմանների փոփոխություն, Լիցենզիայի կրկնօրինակի տրամադրում

34. Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
35. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվան կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով Լիցենզիայի վերաձևակերպման համար՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթեր:
36. Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում ծանուցագրով տեղեկացնում է Հանձնաժողովին իր իրավաբանական հասցեում, հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
37. Լիցենզավորված անձի բաժնետերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է դիմել Հանձնաժողով՝ սույն Լիցենզիայում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:
38. Սույն Լիցենզիայի կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով: Լիցենզիայի կրկնօրինակի ստացման և (կամ) ժամկետի երկարաձգման ընթացակարգերը կարգավորվում են Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտով:

8. Ծանուցում

39. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի ստացման պահից կամ, եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով՝ ներկայացման պահից: